ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԶՆՎԱԾՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Ազնվաձոր 1 փող.2նրբ.1 ☎ /0322/ 6-03-73

Թիվ 59
17. 02.2021թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Խաչատրյանին

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ. թիվ 01/107,3/00404-2020 գրության Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ տեղեկատվությունը, օրակարգը և նախագիծը:

Առդիր 7 էջ

Համայնքի ղեկավար՝ Ն. Հովսեփյան

ՆԱԽԱԳԻԾ

ԱԶՆՎԱՌՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021թ.

ՓԵՏՐՎԱՐԻ 18–Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ազնվաձոր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ազնվաձոր համայնքի ավագանու 2021թ.-ի փետրվարի 18-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1. ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի 2020թ-ի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին :
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աժուրդ-վաճառքով օտարելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ

ԱԶՆՎԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ **2020** ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով

Ազնվաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ազնվաձոր համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2020 թվականի Ազնվաձոր համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Հավելված 1

Ազնվաձոր համայնքի ավագանու

.... Թ. թիվ...-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

2020 թ-ի սեփական եկամուտները 2 905.100դրամի դիմաց հավաքագրվել է 1 461.800 դրամ, կամ սեփական եկամուտները կատարվել են 50.3%-ով:

Ըստ հարկատեսակների պլանի դիմաց կատարողականը հետևյալն է՝

Հողի հարկ- պլանը 1 137.500 դրամ, հավաքագրվել է 669 700 դրամ կամ 58.9%

Գույքահարկ- պլանը 1 083,350 դրամ, հավաքագրվել է 572 600 դրամ կամ 52.9%

Վարձավճար- պլանը 644 280դրամ, հավաքագրվել է 213 500 դրամ կամ 33.1%

Տեղական վճարներ - պլանը 20 000 դրամ, հավաքագրվել է 4 000 դրամ կամ 80%

Տեղական տուրքեր 20 000 դրամ

2020թ.-ի ծախսերը հետևյալն են՝

Աշխատավարձ- 5 594,710 դրամ

Էներգետիկ ծառայություն- 283 187.6 դրամ

Կապի ծառայություն- 66 967.7 դրամ

Տեղեկատվական ծառայություն- 6 000 դրամ

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում-135 600 դրամ

Գրասենյակային նյութեր-30 960դրամ

Տրանսպորտային նյութեր- 920 000.4դրամ

Մասնագիտական ծառայություն-338 000 դրամ

Գյուղատնտեսություն- 605.253 դրամ

Ջրամատակարարում- 3 325.290.1դրամ

Սոցիալական օգնություն-30 000 դրամ

Ընդամենը ծախսեր՝ 11 345.0688դրամ

Հավելված 1

Ազնվաձոր համայնքի ավագանու

.... թ. թիվ...-Ա որոշման

2020թ.-ի Ազնվաձոր համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	նշումներ
1	Ներհամայնքային ծանապարհների վերանորոգում	1տարի	Համայնքի բյուջե	Կատարվել է 60տոկոս(Շարունակական)
2	Համայնքում սոցիալական վատ պայմաններ ունեցող ընտանիքների վիճակի բարելավում	1տարի	Համայնքի բյուջե	Կատարվել է
3	Ճանապարհների լուսավորություն	1տարի	Համայնքի բյուջե	Կատարվել է 50տոկոս,շարունակական
4	Բուժզօրծիքների ձեռքբերում	1տարի	Համայնքի բյուջե	Կատարվել է

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ Կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի 286-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Ազնվաձոր համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ավագանին տալիս է իր համաձայնությունը աճուրդով վաճառքի սահմանված կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասը.

1.Ազնվաձոր համայնքի 06-010-2004-0002 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.1102 հա այլ հողատեսքը,1 լոտով,մեկնարկային գինը՝ 27550ՀՀ դրամ:

2.Ազնվաձոր համայնքի 06-010-0103-0005 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.13365 հա այլ հողատեսքը,1 լոտով,մեկնարկային գինը՝ 33420 ՀՀ դրամ:

Նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոս:

Աճուրդի մասնակցության վճարը 2000 ՀՀ դրամ :

ՕՐԱԿԱՐԳ

2021թ. փետրվարի 18-ին՝ ժամը 11.00-ին Ազնվաձորի համայնքապետարանում կայանալիք համայնքի ավագանուարտահերթ նիստի

ժամը՝ 11.00

1.Ազնվաձոր համայնքի ավագանու 2021թ. փետրվարի 18-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ն.Հովսեփյան

2.ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:

3.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ- վաճառքով օտարելու մասին:

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ազնվաձոր համայնքի ավազանու հերթական (արտահերթ) նիստի և համայնքային նշանակության այլ միջոցառումների(ՏԻՄ-երի ասուլիսների,հանրային քննարկումների)վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ազնվաձոր	Ավազանու արտահերթ նիստ	18.02.2021թ.	11:00	Ազնվաձորի համայնքապետարան(1-ին փող. 2-րդ նրբ. 1)